

Շատախում արժէ 7-10 դուրուշ (56-80 կ.) : Այս դեանակի ջրի մէջ կանձերը թողնում են եւ գալու 15-30 րոպէ : Ապա հանում են, սաւը ջրով լուանում եւ չորացնում»⁽⁴⁰⁾ :

ԿԱՊՈՅՏ

Արեւելեան գորգերու զլիաւոր կապոյտները կը ստացուին լեղահէն : Ասիկա կը հանուի լեղակային բոյսերու տերեւներու ներկանիւթերէն, կ'աճին Հնդկաստանի մէջ չորսէն վեց սոք բարձրութեամբ, անոնք կտրուելով՝ ջուր պարունակող կարասի մը մէջ կը դրուին : Մօտաւորապէս 12 ժամ վերջ խմորումը կը սկսի, եւ երբ հանդարտի՝ գոյացած հեղուկը կը քամուի ուրիշ կարասի մը մէջ, եւ մէկ կամ երկու ժամ խառնուելէ վերջ լեղակը կը թանձրանայ : Այս տունկին վայրի աճող բազմաթիւ տեսակները կան Ասիոյ մէջ, եւ կանխագոյն ժամանակներէ սկսած իբր ներկանիւթ գործածուած են : Լեղակը ներկերուն ամէնէն արժէքաւորն է, որովհետեւ ուրիշ ներկերու հետ խառնելով՝ տարբեր անթիւ երանդներ կը ստացուի»⁽⁴¹⁾ :

Կապոյտ կամ կապուտ հին հայոց սիրած գոյներէն մէկն էր : Ստեփանոս Սիննեցի իր Քերականին մէջ կապոյտին կու տայ նաեւ բիլ հոմանիշը : Հայերէն հին թարգմանութեանց մէջ «կապուտի» գործածուած է «Կերպասոյ» տեղ : Նախ-Ներսէսեան Յով.ի Յայտնութեան ԺԸ. 12 կը կարգացուի «Կերպասոյ», մինչ Յեա-Ներսէսեան խմբագրութեան մէջ նոյն տեղը կը կարգանք «մթերք սսկւոյ եւ արծաթոյ եւ ականց պատուականաց եւ մարգարտից եւ բեհեզոյն եւ ծիրանոյ եւ կապուտի եւ որդան»⁽⁴²⁾ :

Շատ ծանօթութիւն չունինք կապոյտ ներկելու մասին : Կը վրկայուի որ ի Շատախ ճնախ եւ առաջ պատրաստում են մի շիջուկ, որի մէջ, որոշ բաներ աւելացնելով ներկում են կանանչ, կապոյտ եւ մանիշակագոյն : Երկու նուկի մանրած բորակը իւր ծաւալի հինգ չափ ջրով եռացնում են մի կաթսայի մէջ եւ ապա մի նուկի կիր աւելցրնում, խառնում : Ապա հաւի մի փետուր են ձգում այս բաղադրութեան մէջ եւ նայում, թէ ձեռք տալիս թէպուրն ամիջապէս չթափուի, կիրը աւելացնում են, իսկ եթէ թափուած՝ վերցնում են կաթսան կրակից եւ թողնում հովանալու : Երբ մրուրը նստում է տակը, զգուշութեամբ ջուրը լցնում են դրուղի մէջ եւ 3-4 օր թողնում : Յետոյ մի կտաւի քսակի մէջ ածում են 50 դրամ լեղակ եւ պցում դրուղի մէջ : Երբ քսակը, որ բնկղմուած է լինում դրուղի յատակը, 10-15

(40) Անդ, 1913, թիւ 2. էջ 194 :

(41) Oriental Rugs, p. 38.

(42) Հրատ. Ֆ. Մուրատ : Երուսաղէմ, 1905-11, էջ 403 :